ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՍՏԵՂԾՄԱՆ 1500-ԱՄՅԱԿԻՆ

1991 թ. հոկտեմբերի 1—4-ին Երևանում հրավիրված միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիան, Երևանի պետական համալսարանը և Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, թվով փաստորեն երրորդն էր Պատմահոր կոթողային երկի 1500-ամյակին նվիրված համանման ձեռնարկումների շարքում։ Շարունակելով Իտալիայում (Բոլոնիա, 1990 թ. հոկտեմբերի 10—14) և Ֆրանսիայում (1991 թ. հունվարի 25—26) սկիզբ առած գիտական հավաքների ավանդույթը, այն սրակապես նոր երևույթ էր իր ընդգրկումով և նշանակությամբ։ Հայագիտության պատմության մեջ առաջին անգամ մեկտեղ էին թվով վեց տասնյակ խորենացիագետներ, որոնք ներկայացնելու էին իրենց նոր պրպտումների արդյունքները։

Գիտաժողովին, բացի հայաստանյան գիտնականներից, իրենց մասնակցությունը բերեցին արտասահմանյան ութ երկրների մեկուկես տասնյակ խորենացիագետներ։ Նախկին ԽՍՀՄ-ի մեջ մտնող հանրապետություններից ներկայացված էին Ռուսաստանը և Ուկրաինան։ Երևան էին ժամանել Ավետիս Սանճյանը (ԱՄՆ), Միշել վան Էսբրոքը (Բելգիա), Ժերար Դեգեյանը (Ֆրանսիա), Իծխակ Դավիթը (Իսրայել), Գրիգոր Մագուտյանը (ԱՄՆ), Էդմոնդ Շյուցը (Հունգարիա), Գրիգոր Պըլտյանը (Ֆրանսիա), Ջուատտո Տրաինան (Իտալիա), Մարկ Նշանյանը (Ֆրանսիա), Մայքլ Սթոունը (Իսրայել), Մեսրոպ Թոփալյանը (Ավստրիա), Ժան-Մարկ Ռոզենսթիլը (Ֆրանսիա)։ Գիտաժողովի աշխատանքային լեզուներ էին ընդունված նաև ռուսերենն ու արևմտաեվրոպական լեզուները, բայց անգամ օտար մասնակիցները նախընտրում էին զեկուցել ու բանավիճել հայերենով։

Բացման խոսքում ՀՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանը Պատմահոր գլուխգործոցը բնութագրեց որպես «հայ գիտական մտքի մեծագույն փայլատակումներից, մեր ազգային զգացմունքների ամուր հիմքերից մեկը», որը մշտապես գրավել է համաշխարհային պատմագիտության ուշադրությունը։ Այնուհետև լիագումար նիստում լսվեցին «Մովսես Խորենացու սոցիալ-քաղաքական հայացքները» (Սեն Արևշատյան), «Առաքելական վիճակները ըստ Մովսես Խորենացու» (Միշել վան Էսբրոք), «Հայկի և Հայկյանների առասպել-ավանդության փուլերը» (Գագիկ Սարգսյան), «Հայոց ուխտագնացությունները դեպի Սուրբ Երկիր V դարում» (Մայքլ Սթոուն) զեկուցումները։

Խորենացիագիտական խնդիրների շուրջ քննարկումները ընթանում էին գիտաժողովի երկու մասնաճյուղերում։ Առաջինում ընդգրկված էին պատմության և աղբյուրագիտության հարցերով զբաղվող հետազոտողները (նախագահ՝ Հրաչ Բարթիկյան), երկրորդում՝ բնագրագետները, գրականագետները և լեզվաբանները (նախագահ՝ Պարույր Մուրադյան)։ Այդ բաժանումը ինչ-որ տեղ, թերևս, պայմանական էր, քանի որ գիտաժողովում ընթերցվեցին նաև այնպիսի զեկուցումներ, որոնք հավասարապես հետաքրքրում էին զանազան բնագավառների մասնագետներին։ ՀՀ ԳԱ նիստերի դահլիճում և ԳԱ նախագահության նիստերի սրահում գիտաժողովի նիստերը անցկացնելուց հետո, մասնակիցները ևս մեկ անգամ հավաքվելու և մրաքար փոխանակելու առիթ ունեցան Մատենադարանում, ուր տեղի ունեցավ ավանդական «կլոր սեղանը»։

Գիտաժողովը ցույց տվեց, որ բոլորին հուզող և տակավին չլուծված խնդիր է մնում Պատմահոր աշխատության գիտաքննական բնագրի հրատարակության հարցը։ Մասնագետները դեռևս շարունակում են օգտվել 1913 թ. Թիֆլիսյան հրատարակությունից, որը ականավոր հայագետներ Մանուկ Աբեղյանի և Սեթ Հարությունյանի աքնաչան աշխատանքի արդյունքն է, կատարված մեծանուն Ստեփանոս Մալխասյանցի վերահսկողությամբ և մասնակցությամբ։ Բարձր գնահատելով հայագիտության նահապետների վաստակը, գիտաժողովի մասնակիցները համակարծիք էին Պատմահոր երկասիրության նոր հրատարակության անհրաժեշտության հարցում։ Մտահոգություն էր հարուցում այդ մեծ աշխատանքի իրականացման ուղիների խնդիրը։ Հարցն այն է, որ հայա-

գետներին հայտնի բոլոր խորենացիական ձեռագրերը և անգամ պատառիկները արդեն հրատարակված են մասնագիտական պարբերականներում, ներկայացված ու ամփոփված այս օրերին լույս տեսած երևանյան հրատարակությունում, որը Թիֆլիսյանի վերատպությունն է՝ բոլոր անհրաժեշտ լրացումներով (աշխատասիրող՝ Աշոտ Սարգսյան)։ Այս կարևոր քայլը, սակայն, ապագա մեծածավալ աշխատանքի սկիզբն է միայն։ «Հայոց պատմության» բնագրի սրբագրման, խաթարումներից ու աղճատումներից մաքրելու, իմաստավորելու և ընկալելի դարձնելու ուղղությամբ հայագետների նախորդ սերունդների վիթխարի աշխատանքը մինչև այսօր էլ մնում է առանց ամփոփման ու ընդհանրացման։ Ժամանակակից տեղեկատվական գրականությունն իսկ սպառիչ տվյալներ չի տալիս Մովսես Խորենացու երկի բնագրի հետ կապված խնդիրների մասին։ Ո՞րն է ելքը, ո՞ր քայլերն անհրաժեշտ՝ վճռական առաջընթացի հասնելու համար։ «Կլոր սեղանի» քննարկումների ընթացքում այն կարծիքը ձևավորվեց, որ հասունացել է հզոր համակարգիչի օգնությամբ «Հայոց պատմության» բնագրի նոր հրատարակության պատրաստման խնդիրը։ Միայն ժամանակակից տեխնիկական միջոցները հնարավորություն կընձեռեն՝ ի մի բերել անխտիր բոլոր հետազոտողների ջանքերը, հմուտ մասնագետների հանձնախմբի ուժերով ձեռագրական ընթերցվածքներից ընտրել լավագույնները, վերականգնել բնագիրը՝ նկատի ունենալով V դարի դասական գրաբարի նորմերը։ Մնում է հուսալ, որ խորենացիագիտական միջազգային կենտրոնը, որի կազմավորման անհրաժեշտության մասին խոսք բացվեց «կլոր սեղանի» ժամանակ, գործնական քայլերի կդիմի բնագրակազմական աշխատանքներին ընթացք տալու համար։

Բացի բնագրագիտական-աղբյուրագիտական բնույթի զեկուցումներից՝ «Սկզբնաղբյուրին դիմելու Մովսես Խորենացու ինքնատիպության շուրջ» (Կիմ Մուրադյան), «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը» (Արտաշես Մաթևոսյան), «Մի կարևոր ճշգրտում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (Ալբերտ Մուշեղյան), «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրական հետքերը V—VII դարերի երկերում» (Պարույր Մուրադյան), «Մովսէս Խորենացիի «Հայոց պատմութիւնը» համառօտելու եղանակը Հովհաննէս Դրասխանակերտցի եւ Ստեփանոս Ասողիկ պատմիչներու մոտ» (Գրիգոր Մագուտյան), բնագրագիտական որոշակի արծարծումներ էին պարունակում նաև գիտաժողովում ընթերցված լեզվաբանական զեկուցումները։ Վերլուծվեցին «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունները (Գևորգ Ջահուկյան), «Տենչայ Սաթենիկ տիկին» հայտնի հատվածը (Վազգեն Համբարձումյան), հունարեն բառապաշարը (Գոհար Մուրադյան), Պատմության հաճախականության բառարանը (Օֆելյա Խաչատրյան), տեքստաշափության մեջ հաշվողական տեխնիկայի կիրառման հնարավորությունները (Ռոբերտ Ուռուտյան)։

Մովսես Խորենացին հայ մատենագրության պատմության մեջ հանրահայտ է Քերթողահայր պատվանունով, որը միջնադարյան գրականության զանազան բնագավառներում նրա ներդրման անհերքելի վկայությունն է։ Ինչպես հայտնի է, Պատմահայրը եղել է նաև հմուտ թարգմանիչ, ընդ որում նա առանձնակի կարևորություն է տվել թարգմանելիք գործի ընտրությանը։ Ուշագրավ է, որ հենց Մովսես Խորենացին է մեր աղջային մատենագրության արշալույսին կատարված, աշխարհիկ բովանդակություն ունեցող առաջին գրքի թարգմանիչը (Հասմիկ Սիմոնյանի զեկուցումը)։ Մովսես Խորենացու, որպես խոշոր մշակութային գործչի կերպարի վերհանմանն էին նպատակուղղված ևս երկու զեկուցում՝ «Մովսես Խորենացու հիմներգական ժառանգությունը» (Աննա Արևշատյան), «Մովսես Խորենացին և արվեստը» (Մանյա Ղազարյան)։

Գիտաժողովի ամենաարժեքավոր արդյունքներից էր, անշուշտ, Մովսես Խորենացու գաղափարների, պատկերացումների, համոզումների վերհանումը մի շարք զեկուցումներում՝ «Հայոց պետականության գաղափարը Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում» (Էդվարդ Դանիելյան), «Մովսես Խորենացու Պատմահայեցողությունը» (Արտաշես Մարտիրոսյան), «Մարդու կոնցեպցիան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» (Ալբերտ Ստեփանյան), «Թագավորական իշխանության ըմբռնումը Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկում» (Աղատ Բոզոյան), «Հայոց պետականության սկզբնավորման ճիշտ ըմբռնումը Մովսես Խորենացու Պատմության մեջ» (Ֆելիքս Տեր-Մարտիրոսով), «Մովսես Խորենացու գրական-քննադատական հայացքները (Հրանտ Թամրազյան), «Ծագումնաբանության կառուցումը Խորենացիի Պատմության մեջ» (Գրիգոր Պըլտյան)։ Խոսուն փաստերով հավաստվեց այն աներկբայելի իրողությունը, որ Պատմահոր համար բնութագրական է եղել համակարգային մոտեցումը ավանդելիք նյութին։ «Հայոց պատմությունը» բարդ ու ներդաշնակ կառույց է, ընդ որում շարադրված ինք-

նատիպ գեղագիտական պատկերացումների համաձայն։ Պատմահոր որդեգրած սկզբունքները հնարավոր է բացահայտել համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ։ Զեկուցողները նախընտրում էին խորամուխ լինել Մովսես Խորենացու ստեղծագործական աշխատանոցի զաղտնիքների մեջ, լուսաբանել պատմական իրականության պատկերման խորենացիական կերպաձևերը, պարզաբանել սկզբնաղբյուրներից օգտվելու Պատմահոր կիրառած եղանակները։ Տիրապետող էր այն համոզումը, որ «Հայոց պատմությունը» վերապատմելու պարզունակ մոտեցումը ոչ մի կերպ չի կտրող զրավական դառնալ խորագնա հետազոտության համար։ Ջատագովելու միջոցով հնարավոր է միայն կուռքի վերածել Պատմահորը, իսկ կուռքի պաշտամունքն ու անաչառ հետազոտությունը, ինչպես հայտնի է, հակոտնյա երևույթներ են։

Մովսես Խորենացու հաղորդումների քննությունը և նորովի իմաստավորումը, «Հայոց պատմության» տեղեկությունների ու պատկերացումների լույսի ներքո դանազան խնդիրների պարզաբանումը զգալի տեղ էին գրավում գիտաժողովի աշխատանքներում՝ «Բյուզանդական քաղաքական տերմինաբանությունը Մովսես Խորենացու և նրա հետևորդների երկերում (գաղափարների էտիմոլոգիան)» (Վիտա Հարությունովա-Ֆիդանյան), «Զորանամակը» Մովսես Խորենացու «Հայոց պատմության» տեղեկությունների լույսով (Բարկեն Հարությունյան), «Մովսես Խորենացին Մամիկոնյանների ծագման մասին» (Ռաֆայել Մաթևոսյան), «Իշխանական տոհմերի ծագման խորենացիական տեսությունների արձագանքները XII—XIII դարերի հայ մատենագրության մեջ» (Հայրապետ Մարդարյան), «Արտաշես I-ի կողմից Կասպիանն-Փայտակարան մարզի «նվաճման» հարցի շուրջ (ըստ Մովսես Խորենացու)» (Հենրիկ Սվազյան), «Մովսես Խորենացու օգտագործած մարաբասյան տեղեկությունների արժանահավատությունը» (Լևոն Շահինյան)։ Դիտելին այն էր, որ հետազոտության ոլորտն ընդգրկում էր Արևմտյան Եվրոպայից («Եվրոպան և եվրոպացիները Մովսես Խորենացու աշխատություններում», Ժերար Դեդեյան) մինչև Պաղեստին ընկած հսկայական տարածքը («Դրվագներ հայ պաղեստինագիտության», Իծխակ Դավիթ)։ Պատկառաղդու էր նաև ներկայացված զեկուցումների ժամանակագրական կտրվածքը։ Մասնավորապես, հնագետների դիտարկումները ցույց տվեցին, թե գիտելիքների ինչ խոր պաշար է ունեցել Պատմահայրը հայոց վաղնջական պատմության և նյութական մշակույթի վերաբերյալ՝ «Մովսես Խորենացին և Հայաստանի հնագիտությունը» (Գևորգ Տիրացյան), «Հայաստանի անտիկ շրջանի քաղաքաշինությունը և Մովսես Խորենացու վկայությունները» (Ծորես Խաչատրյան), «Հայկ Նահապետի մասին առասպելն ու Կիրշա քաղաքը Նիբուրի լեռներում» (Սիմոն Հմայակյան)։

Միանգամայն առանձնահատուկ է եղել Պատմահոր երկի ճակատագիրը հայ մշակույթի և ազգային մտածողության կազմավորման պատմության մեջ։ «Հայոց պատմությունը» անընդհատ լիցք է տվել հայ մատենագրության և ընդհանրապես մշակույթի զարգացմանը, մըշտապես արթուն պահել ազգային ինքնագիտակցության զգացումը։ Գիտաժողովում կարգացված զեկուցումները այնքան հանգամանորեն էին արծարծում «Մովսես Խորենացին և հայոց միջնադարը» թեման, որ առանձին նիստի նյութ կարող էին կազմել։ Այդ արծարծումների ծիրը ներառում էր ոչ միայն պատմագրությունը («Մովսես Խորենացի և Առաքել Դավրիժեցի», Հրաչյա Միրզոյան), այլև հայ միջնադարյան գեղարվեստական դրականությունը («Մովսես Խորենացին և «ողբի» դրական ժանրը», Ավետիս Սանճյան, «Մովսես Խորենացու Ողբի արձագանքները XVIII դարի վերանորոգվող դասական բանաստեղծության մեջ», Շուշանիկ Նազարյան)։ Անտեսված չէր նաև Մովսես Խորենացու և հարևան իրանական ու բյուզանդական մշակութային աշխարհների փոխազդեցության խնդիրը («Իրանական վիպական զրույցների արձագանքները Մովսես Խորենացու Պատմության մեջ», Բարկեն Ջուդասղյան, «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ զետեղված պարսից առասպելների հարցի շուրջ», Ալլիտա Դոլուխանյան), «Մովսես Խորենացու «Պատմության» և «Փոտ պատրիարքի ծննդաբանության» աղբյուրները», Մանյա Շիրինյան)։ Գիտաժողովի նյութերի հրատարակությունը, որը նախատեսված է հաջորդ տարում, թույլ կտա ծանոթանալ խորենացիագիտության նոր ձեռքբերումներին, կուրվագծի այն ուղիները, որոնցով, հավանաբար, մոտ ապագայում կարող է զարգանալ խորենացիագիտությունը։

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ